— Երբե՛ք, — պատասխանեց նա վճռական ձայնով: — Մեր փախուստը աւելի կասկածաւոր կդարձնէ մեզ:

— Մեզ կարող են կալանաւորել:

— Հազիւ թէ: Միայն ինձ հարկաւոր է այսօր անպատճառ տեսնել մէկի հետ...

Այդ առաջին անգամն էր, որ Ասլանը յայտնեց ինձ մի գաղտնիք, գուցէ նրա համար, որ զգոյշ լինեմ: Բայց վարպետ Փանոսին այդ մասին ոչինչ չասաց: Այդ ինձ շատ զարմացնում էր: Երեւում էր, որ այդ մարդիկ իրանց ծանօթներին եւ մինչեւ անգամ մտերիմներին ամէն ինչ յայտնում էին մի որոշ չափով, որքան հարկաւոր էր, որ նա գիտենար, իսկ աւելին իրանց մօտ էին պահում:

Այնօր Ասլանը դուրս չեկաւ տանից, այլ, առանձնացած իր սենեակում, զբաղոած էր ինչ-որ գրութիւններով: Ես էլ նրան չխանգարելու համար բոլորովին միայնակ թողեցի, գնացի պարտէզը եւ քնեցի կանաչ խոտերի վրայ, շլորենու ստորի ներքոյ: Երբ զարթնեցի, իսկոյն գնացի նրա մօտ: Նա դեռ նոր էր վերջացրել իր գործը:

Երեկոյեան պահուն նա հարցրեց վարպետ Փանոսից.

— Կարծեմ ձեր քաղաքում պէտք է լինի մի մուսուլցի հայ վաճառական:

— Երեւի խօջայ Թորոսի մասին էք հարցնում, որ թումաջի (սաֆիանի) վաճառականութիւն է անում:

— Այո՛, խօջայ Թորոսի մասին: Որտե՞ղ կարելի է տեսնել նրան:

— Թէոս ախպոր սրճարանը: Նա համարեա ամէն երեկոյ այնտեղ է լինում: Ի՞նչ կայ:

— Ոչինչ: Նրա անունով յանձնարարական նամակ ունեմ, պէտք է խնդրել, որ մի ապահով քարաւանի հետ ինձ ճանապարհ դնէ դէպի Մուսուլ:

— Այդպէս շուտ գնո՞ւմ էք:

— Գուցէ մի քանի օրից յետոյ: Բայց պէտք է նա առաջուց գիտենայ, որ ինձ համար գրաստներ վարձէ:

Թէոս ախպոր սրճատունը գտնւում էր ոչ թէ Այգեստանում, այլ քաղքում: Վարպետ Փանոսը ցոյց տուեց բոլոր նշանները, թէ ո՛ր կողմում, ո՛ր փողոցում, ո՛ր տան մօտ է սրճարանը, եւ աւելացրեց, եթէ մուսուլցի կաշեվաճառը այնտեղ չլինի, բաւական է միայն յայտնել սրճանոցի տիրոջը, նա շատ լաւ մարդ է, եւ իսկոյն կանչել կը տայ, որովհետեւ մուսուլցին նոյն սրճատանը կից պանդոկումն է կենում: